ՀՀ Ներքին գործերի նախարարություն
12.03.2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՆՍԱԶԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ 12.03.2024 Թ. ԺԱՄԸ 13:00-ԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԻ

Գնահատող հանձնաժողովը 12.03.2024թ.-ին ժամը 13:00-ին Ներքին գործերի նախարարության շենքում (հասցե՝ Երևան 0025, Նալբանդյան 130) հրավիրել է Գնահատող հանձնաժողովի նիստ, որը կայացել է:

<u>Գնահատող հանձնաժողովի կազմ</u>

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ
Լիաննա Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական
Արշակ Քերոբյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից
Վաղինակ Բաղեյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից

Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Լեոնիդ Ավետիսյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար (համաձայնությամբ)
Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)

Նիստին մասնակցում էին Գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները: Գնահատող հանձնաժողովի անդամ Արմեն Ղազարյանը նիստին միացել է առցանց եղանակով՝ տեսակապի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեսաձայնագրվել է, իսկ Գնահատողի հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ արձանագրվել:

<u>Օրակարգային հիմնական հարցը՝</u>

- Համաձայն ՀՀ կառավարության 07.03.2024թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2346-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 350-Ա որոշմամբ լրացված պահանջի՝ **հաստատել մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի որակավորման փուլի հայտարարությունը (այդ թվում՝ որակավորման հարցումը) և շուկայի հնարավոր մասնակիցների ծանուցումը/հրավերը, հրապարակել և տարածել:**

Քվեարկության արդյունքը՝

- Օրակարգային հիմնական հարցը դրվեց քվեարկության: Գնահատող հանձնաժողովը միաձայն կողմ քվեարկեց:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Արփինե Սարգսյանն առաջարկեց ՊՄԳ ծրագրի շրջանակում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի որակավորման փուլի հայտարարության և ծանուցման/հրավերի տեքստերի տեխնիկապես շտկված տարբերակները էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել Գնահատող հանձնաժողովի անդամներին՝ մինչև 12.03.2024թ. ժամը 17:00-ն առաջարկներ և դիտողություններ ներկայացնելու համար: 12.03.2024թ.-ի ժամը 17:00-ի դրությամբ առաջարկների առկայության դեպքում դրանք անհրաժեշտ է իրացնել, իսկ դրանց բացակայության դեպքում ներկայացված տեքստերը համարել կոնսենսուսային, վերջնական և հրապարակման ենթակա: Դրանց հիման վրա նույն օրը՝ 12.03.2024թ.-ին, անհրաժեշտ է հրապարակել հայտարարությունը Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում և ծանուցել շուկայի հնարավոր մասնակիցներին:

Գնահատող հանձնաժողովը միաձայն ընդունեց առաջարկը:

Գնահատող հանձնաժողովի անդամ Ներսես Երիցյանն առաջարկեց հաստատել նաև մինչև սույն հայտարարության հրապարակումը շուկայի հետ բաց շփումների արդյունքում ստացված հարցերի մեկնաբանությունները, որոնք օժանդակ նյութ կհանդիսանան նոր հայտարարության շրջանակներում հնարավոր հայտատուների համար:

Գնահատող հանձնաժողովը քվեարկության դրեց հետևյալ հարցը՝

- Մինչև Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգային հիմնական հարցով հայտարարության հաստատումը շուկայի հետ բաց շփումների արդյունքում ստացված հարցերի մեկնաբանությունները համարել գործող և հրապարակել:

Քվեարկության արդյունքը՝

- Քվեարկությանը մասնակցող բոլոր անդամները միաձայն կողմ քվեարկեցին: Քվեարկությանը չի մասնակցել Գնահատող հանձնաժողովի անդամ Արմեն Ղազարյանը՝ հեռավար ձևաչափով նիստին մասնակցելիս նիստի ավարտին կապի խնդիրներից ելնելով:

Սույն արձանագրությունը կազմվել է 12.03.2024թ.-ին, բաղկացած է 5 թերթից:

Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա կազմ՝

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)	_____ (ստորագրություն)

ՀՀ Ներքին գործերի նախարարություն
12.03.2024թ.

Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ	(ստորագրություն)
Լիաննա Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական	(ստորագրություն)
Արշակ Քերոբյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ	(ստորագրություն)
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ	(ստորագրություն)
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից	(ստորագրություն)
Վաղինակ Բաղեյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից	(ստորագրություն)
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն	(ստորագրություն)

Լեոնիդ Ավետիսյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն	(ստորագրություն)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար	(ստորագրություն)
Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)	(ստորագրություն)